ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 31

ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14- րդ հոդվածի 6- րդ կետի պահանջներով .

Ավագանին որոշում է՝

Հաստատել Ազատաշեն համայնքի 2018թվականի նոյեմբերի 27- ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝

1.Ազատաշեն համայնքի 2019թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին

2 . Ազատաշենի համայնքապետարանի աշխատակազմի առանձին համայնքային ծառայողների հավելավճարի կարգը սահմանելու և Ազատաշեն համայնքի ավագանու 2015թվականի նոյեմբերի 20- ի թիվ 37-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

3.Համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու ,համայնքա պետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը , հաստիքա ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

4.Ազատաշեն համայնքի 2018թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՆՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 32-Ն

ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 9- րդ , 10- րդ , 11- րդ, 12- րդ , 13- րդ ,14 – րդ հոդվածներով և << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 – րդ հոդվածի 18- րդ կետի պահանջներով .

Ավագանին որոշում է՝

Որոշում 32-Ն .

1. Սահմանել Ազատաշեն համայնքի 2019թվականի տեղական տուրքերի տեսակները և հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսան հինգ հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսակ հինգ հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ քսան հինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան երեք հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասնմեկ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքու՝ տասներեք հազար դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան երեք հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր յոթանասուն հինգ դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-

ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսան հինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝տասնհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ յոթանասուն հինգ հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համա՝ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համա՝ ութ հազար դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

գ. սոցիալական գովազդի համար զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝հարյուր ութանասուն ութ դրամ .

գ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝ յոթանասուն հինգ դրամ .

12) Հայաստանի Հանրապետության Ազատաշեն համայնքի անվանումը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ,

2.Որոշման 1- ին կետով սահմանված դրույքաչափերի համար կիրառվել է 0.5 գործակիցը:

3.Սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարսահմանել՝ հինգ հազար դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ տասհազար դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարսահմանել՝ երեք հազար դրամ ,

6) համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար , յուրաքանչյուր ամիս սահմանել վճար՝

ա.կենցաղային աղբի համար ,յուրաքանչյուր բնակչի համար՝130 դրամ

բ.շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար ըստ ծավալի 1խմ համար՝ հինգ հարյուր դրամ

գ.առևտրի /այդ թվում շուկաների/ , հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով 1քմ. -10դրամ ,

դ.հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով 1քմ. – 10դրամ

ե.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով 1քմ. 5 դրամ ,

զ.կրթական, մշակութային,առողջապահական,սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով 1քմ.- 1դրամ ,

7) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար հինգ հարյուր դրամ ,փոխհատուցման վճար . .

8) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահմանել

ա. կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն 500 դրամ .

բ. ծննդօգնություն թեթև միջամտության դեպքում 1000 դրամ , ծանր միջամտության դեպքում 5000 դրամ .

գ.վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների մունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում բացառությամբ << Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաասնասնահամաճարակային միջոցառումների մանր եղջերավոր անասունների համար 100 դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար 200 դրամ .

դ.կենդանիների արտաքին և ներին մակաբույծների դեմ պայքարի համար 200 դրամ

ե. ախտահանության 1 քառակուսի մետրի համար 200 դրամ

զ. միջատազերծում (դեզինսեկցիա)1 քառակուսի մետրի համար 100 դրամ

է. կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) 1 քառակուսի մետրի համար 200 դրամ

ը. արհեստական սերմնավորման համար 5000 դրամ

թ. կենդանու հերձում մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ , խոշոր եղջերավորներ անասունների համար 3000 դրամ ,

ժ. կենդանու բուժում յուրաքանչյուր այցելությունը մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ ,

ի. կենդանիների նախասպանդային գննում մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ:

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ենոքյան Արմեն

Խաչատրյան Գուրգեն

Հակոբյան Սերյոժա

Մուրադյան Արմեն

Սաֆարյան Վիրաբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 33-Ն

ԱԶԱՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱ ԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին ը կետի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով .

Ավագանին որոշում է.

1.Ազատաշենի համայնքապետարանի աշխատակազմի ավելի բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողներին հավելավճար սահմանել աշխատավարձի դրույքաչափի 1 %-ի չափով:

2. Ուժը կորցրած ճանաչել Ազատաշենի համայնքի ավագանու 2015թվա կանի նոյեմբերի 20 - ի <<Ազատաշենի համայնքապետարանի աշխատա կազմի առանձին համայնքային ծառայողների հավելավճարի կարգ սահմանելու մասին >> թիվ 37 Ն որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ - 0

ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թ ԱՎԱԳԱՆԻ ԹԻՎ 34-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 11- րդ և 28- րդ կետի պահանջներով

Ավագանին որոշում է՝

1.Սահմանել համայնքի ղեկավարի վարձատրությանը չափը՝ 212,000հազ դրամ, 2019թվականի համար :

2. Հաստատել 2019թվականի համար համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը
1/աշխատակազմի քարտուղար – 1հաստիքային միավոր -163,000 հազ դրամ
2/ առաջատար մասնագետ -1հաստիքային միավոր - 131,000հազ դրամ
3/առաջին կարգի մասնագետ -1 հաստիքային միավոր – 130,000 հազ դրամ
4/ երկրորդ կարգի մասնագետ – 1 հաստիքային միավոր – 126,000 հազ դրամ
5/հավաքարար – 1 հաստիքային միավոր – 73,000հազ դրամ
6/անասնաբույժ – 0,25 հաստիքային միավոր - 20,000հազ դրամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ազատաշեն, (096) 444444, azatashen.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թ ԿԱՊԱՆԻ թիվ 35Ն

ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018թ ԿԱՊԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 5 - րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշում է՝

Կատարել հետևյալ փոփոխությունները՝
1. Հողի գործարնական նշանակությունը փոփոխելու պատճառով համայնքի բյուջեի ֆոնդային մաս մուտքագրված 203,000հազար դրամը ուղղել ծախսային մասի 01 1 1 խմբի 5122 հոդվածին:
2. Ազատաշեն համայնքի 2018թվականի բյուջեի վարչական մասի 11 1 2 խմբի 4891հոդվածից պակասեցնել 100,000 հազար դրամ , ավելացնելով 01 1 1 խմբի 4261 հոդվածին :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՆՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԻՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ